

ԵՐԵԿՈՅԹՆԵՐ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1998 Հոկտեմբերի տասեն մինչեւ Դեկտեմբեր 19, Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահին մէջ տեղի ունեցան շաքաթօրեայ հանդիպումներ «Ասմունք եւ մեղեդի» խորագրի տակ: Երեկոյթները կ'ուղեկցուին երաժշտութեամբ եւ ունեն ուսուցողական բնոյթ, որոնց նպատակն է նոր սերունդը ծանօթացնել հայուն հաւատքին եւ մշակոյթին: Առաջին հանդիպումը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 10ին, նուիրուած արեւմտահայ գրագէտ Համաստեղին. ներկայացնողն էր դասախօս Գրիգոր Կարախանեանը: Հոկտ. 17ին խօսեցաւ դասախօս Գեորգ Գեորգեանը «Հայոց Տեալականը»: Սրբոց Թարգմանչաց տօնին առթիւ խօսեց սաղիմարմակ դասախօս Անուշ Նազգաշեանը մեծ եւ սփռելագործ վարդապետներու կատարած հրաշալի գործունէութեանց մասին, ամսու 24ին: Հոկտ. 31ին ներկայացուեց «Զորս Աւետարաններ»ու հակիրճ ներածականը,

ուսուցիչ Գեորգ Մովսիսեանի աշխատասիրութեամբ: Նոյեմբերի 7ին ԺՎ.Ի խմբավար Վալերի Փիրումեանի պատրաստութեամբ ներկայացուեցաւ «Բախի ստեղծագործական ուղին»: Դասախօսութեան ընթացքին լսուեցին հատուածներ անուանի երգահանի գործերէն: Նոյեմբեր 14ին ներկայացուեց «Կիրակի օրուայ խորհուրդը», շաքաթի օրէնքէն անցումը կիրակիի շնորհին նիւթը, որը ներկայացուց դասախօս Մովսէս Բաբաջանեանը: «Ողորմութեան Խորհուրդը» ներկայացուց տիր. Միսաք Յովհաննէսեան Նոյեմբերի 21ին, օգտուելով եռամեծ վարդապետ Գր. Տաթեւացու բարոգաբանութենէն: Դեկտեմբերի 19ին «Բարեխօսութիւն սրբոց» խորագրին տակ ուսուցիչ Մովսէս Բաբաջանեանը բացատրեց երկնայիններու բարեխօսութեան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ եւ պատմեց Ս. Նիկողայոս հրաշագործի վարքը:

Է. Բ.

ՏԻԹ. ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ (ԱՆԵԼ) ԵԼՈՅԹՆԵՐԸ

Անել (Տֆ. Կարօ Կարապետեան) հրատարակեց քերթուածներու նոր հատոր մը՝ «Ի Մտանել Արեգական»: Այս առիթով, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, 28 Նոյեմբեր 1998 շաքաթերեկոյին, քերթողն ու քերթուածներուն բազմերես հոգեվիճակներուն ներկայացումը կատարեց Տֆ. Անուշ Նազգաշեան, մէջ ընդ մէջ արտասանելով յատկանշական ընտրանի մը «Ի Մտանել Արեգական» հատորէն:

Արիս Եպս. Շիրվանեանի բացման խօսքէն եւ կենսագրական հակիրճ բացատրականէն եւ Պատրիարք Սրբազան Հօր գնահատանքի խօսքէն յետոյ, Անել իր շնորհակալութիւնները յայտնեց եւ իր զգացմունքներն ու մտածումները արտայայտեց մանաւանդ արտասահմանի հայ

գրողին ու տպուած գիրքին հանդէպ հասարակութեան ընդհանուր անտարբերութեան մասին:

Երկրորդ առիթով մը, 1998 Դեկտեմբեր 26ին, Տֆ. Կարօ Կարապետեան հրաւիրուեցաւ խօսելու բանաստեղծ Վահան Թէքեանի մասին: Հոգեվերլուծական մօտեցումով ներկայացուց Վահան Թէքեանի կեանքի գանազան հանգրուանները, կուսակցական, ազգային, կրթական, որբախնամ ծառայութեանց մէջ ստանձնած դեկավարի դերը: Ապա, Վահան Թէքեանի քերթուածներու վերլուծումով ու խմբումներով դասաւորեց եւ ներկայացուց բանաստեղծ Թէքեանի անձը, մարդը, իր բզմերեսները, եւ Հայ գրականութեան մէջ իբրեւ «բանաստեղծութեան իշխան» որ արժանաւոր տեղը եւ թանկագին ժառանգութիւնը:

Ն. Ա.